վերանայ կրօնական խորութեան պահպանած կաստային բնաւորութիւնը և նորանից առաջացող կործանիչ հետեւանքները, որովհետև մենք ապրում ենք մի ճգնաժամի մէջ, երբ ամեն դաւանութիւններին պատկանող հայերս ձեռք ձեռքի պիտի տանք և նպաստենք միայն մեր ընդհանուր ազգային նպատակին։ ,,Մեղու'' լրագիրը դարձեալ չը կարողացաւ հասկանալ հասարակութեան տրամադրութիւնը և բանը հասցրեց այնտեղ, որ հրապարակում մնացին նորան ջատագով հերոսներ մի ջուխտ Ղազարներ և մի Սենեքերիմ Արծրունի։ Այս վերջինին կարծես բաղդը ուղարկեց հակառակ բանակի պարագլուխ և իր անուանակցին տակի մասխարայ լինելու համար որի դէմ մի բաց նամակ ուղղելով, անհատ և անընկեր փաստաբանը երկու Ղազարների շարքն ընկնելով, վերջականապէս վայր գցեց ,,Մեղուի'' առանց այն էլ կոտր ընկած անունը։

Բայց ահա հայի բնաւորութեան յատուկ մի հետաքրքրական նշան. այս ամենից յետոյ ,,Մեղու'' լրագիրը մտածեց ամենօրեայ դառնալ. մենք բոլորովին չենք հասկանում թէ նա ինչ մտածելով այսպիսի որոշման եկաւ։ Եթէ ասենք թէ տեսնելով «Մշակի» յառաջադիմական ուժգին քայլերը, նա որոշեց զօրեղ միջոցներին դիմել նորա հետ մաքառելու համար,—այդ էլ բոլորովին հասկանալի չէ, որովհետև արդէն փայլուն օրինակից նա տեսաւ, որ քանի աւելի է յարձակւում «Մշակի» դէմ, դորանով աւելի ևս ույժ է տալիս իր հակառակորդին։ Իսկ եթէ մտածենք, թէ ,,Մեղուն'' որոշեց երկու Ղազարների և նոցա արժանի ընկեր պ. Սենեքերիմ Արծրունու խորհրդով հայ հասարակութիւնը ուժով ձգել իր կողմը, այդ աւելի ևս անհասկանալի է, որովհետև պիտի շատ անհեռատես լինել մի այդպիսի անբնական և անհեթեթ նպատակին դիմելու համար։ Ուրեմն ինչից առաջ գալով «Մեղուն» չը դադարեցրեց իր հրատարակութիւնը, այլ կամեցաւ ամենօրեայ լինել,—այդ մեզ համար բոլորովին անհասկանալի է։ Այսպէս թէ այնպէս «Մեղուի» ամենօրեայ հրատարակութիւնը մեզ այնչափ հետաքրքիր տարակուսանքի մէջ է գցել, որ մենք մի մեծ ուշադրութեան արժանի նորութիւն կը համարենք, երբ պ. Պետրոս Սիմէօնեանցը ինքը բացատրէ ազգային տպագրութեան մէջ պատահող այսպիսի մի անցքի որպիսութիւնները։

Կրօնական հարցի մէջ, իմ կարծիքով, «Մշակը» իր սուր հայեացքով և հոտառութեամբ շատ լաւ է հասկացել, որ այդ տեսակ նշանաւոր հարցի վերաբերութեամբ պէտք էր թոյլ տալ խօսել նոյն իսկ իրան հասարակութեանը, իր զանազան դասակարգերի մարդկանց լեզուով։ Թէպէտ պատահում են կարճամիտներ, որոնք ասում են թէ՝ ինչի է գետեղում «Մշակը» այս ինչ, այն ինչ թոյլ և անբովանդակ յօդուած Ղարաբաղից, Շամախուց, Եկատերինօդարից, Ցարիցինից կամ Ալէքսանդրապօլից և այլն,— բայց նրանք չեն հասկանում, թէ լրագիրը հրատարակւում է հասարակութեան համար և այն ժամանակ է արժանի լրագիր կոչվելու և կարող է յոյս ունենալ մի հարցի մէջ յաղթող հանդիսանալու, երբ նոյն իսկ հէնց այդ հասարակութեան անդամները իրանց զարգացման աստիճանով մասնակցում են զարթեցրած հարցին և համերաշխ են նրան։ Կրօնական, կամ լաւ է ասել ազգային հարցի պարզելը այնչափ մի մեծ և ծանրակշիռ խնդիր էր ազգային բոլոր խնդիրների մէջ, որ անկարելի էր արհամարհել հայ ժողովրդի իրան տրամադրութեան արտայայտութիւնը, իրան սեփական համոզմունքը, որչափ էլ անճարտար և անպաճոյճ լեզուով գրվէին զանազան տեղերի նամակները։

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի հասարակութիւնից ընտրված համահաւասար հասկացողութեամբ և գիտութեամբ երկու հարկ հաւաքողներից մինը իր գործերը տանում է կանոնաւոր կվիտանցիական մատեանով, իսկ միւսը մասնաւոր մատեանով։ Վերջինիս այսպիսի առանձին արտօնութեան վայելելու պատճառը հասարակութեան համար անյայտ է։ Ումից կախված է այս մասին իրաւունքը, հրաւիրում ենք նրանց ուշադրութիւնը»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են, որ դեկտեմբերի վերջերում Գայլոդան լճում խեղդվել են 4 հոգի հայերից ձուկ բռնելու ժամանակ։ Ընկերներից մինը տեսնելով միւսի կորուստը, ինքն էլ իրան նետում է ջրի մէջ, նրան ազատելու համար և նոյնպէս խեղդվում է։

—

Մեզ գրում են ԻԳԴԻՐԻՑ. «Երեք հոգի տեղացի հայերից ճանապարհորդելով դէպի Ղարսի կողմերը, այդ նահանգի սահմաններում գտել են քարածուխի մի հարուստ հանք։ Այժմ սպասում են տէրութեան կարգադրութեանը այդ հանքը արդիւնահանելու իրաւունք ստանալու համար։ Գտնողները իրանց գիւտը երեւան հանելու համար ծախս են արել արդէն մօտ 1000 ռուբլի»։

—

Կարող ենք յայտնել մի ուրախալի լուր մեր ընթերցողներին, այն է, որ շատերը մեր այլադաւան հայերից կովկասեան այլ և այլ քաղաքներից սկսել են գրվել «Մշակին»։ Այդ մինչև այժմ չեղած երևոյթը ցոյց է տալիս պարզապէս, որ մեր այլադաւան հայերը հասկացել են վերջապէս լուսաւորչադաւան հայերի հետ ազգային միութեան կապը հաստատելու անհրաժեշտութիւնը, հասկացել են նաև, որ «Մշակը» մի նեղ կուսակցական լրագիր չէ, այլ նրա փափագն էր միշտ դառնալ մի ընդհանուր հայոց օրգան։

—

Ստացանք ԱՍՏՐԱԽԱՆԻՑ պ. Աւետիս Թումաշեանցից յօգուտ Կ. Պօլսի «Միացեալ Ընկերութեան» 15 ռուբլ, որ պարոնը խոստանում է իւրաքանչիւր տարի վճարել։

—

Շնորհակալութեամբ ստացանք տիկին Սոֆիա Մսերեանցից Մոսկվայում հրատարակվող «Փարոս Հայաստանի» հայոց պատկերազարդ հանդէսի առաջին համար։ Տիպը և պատկերները շատ մաքուր և գեղեցիկ են։ Միայն ցանկալի է, որ լեզուն աւելի մշակված և կենդանի լինի։

—

Մի քանի տարի սրանից առաջ «Մշակի» մէջ տպված Րաֆֆիի «Բիբի-Շարաբանի» պատկերը, որ մի նկարագիր էր Պարսկաստանի գաւրների (արևապաշտների) կեանքից, այս օրերս տպվեցաւ գերմանական թարգմանութեամբ Բերլինի «Vossische Zeitg» լրագրում։ Թարգմանութիւնը շատ աջողված է և գերմաներէն ճոխ լեզուի հետ պահպանել է արևելեան ոճի առանձնութիւնները։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Շերոնի տէր-Յակոբը աւագ քահանայ Տէր-Մարկոսեանցին մի չնչին պատճառով մատնել են Վեհափառ կաթողիկոսին, և նա ահա վեց ամիս է որ հրաժարված է քահանայութիւնից, չը նայելով որ խեղճ ծերունին, երեք անգամ է խնդիր է ուղարկում Վեհափառին, խնդրելով որ քննութիւն նշանակեն, եթէ նա յիրաւի մեղաւոր է թող պատժեն, ապա թէ ոչ թոյլ տան քահանայութեան պաշտօնը վարելու։ Էջմիածնից պատասխանում են թէ Վեհափառը հիւանդ է, երբ առողջանայ քննութիւն կը նշանակվի։ Մենք զարմանում ենք, միթէ դժուարին է, մէկ վարդապետ ուղարկել քննութեան համար։ Մենք, տէր-Յակոբի ծուխը, չը գիտենք թէ ինչպէս է վերջանալու մեր քահանայի գործը, գոնեայ ուրիշ քահանայ իրաւունք ունենայինք ընտրել մեզ համար։ Թէև լսում ենք որ նրա փոխարէն ուրիշն է նշանակված ծուխը հովելու, բայց մենք չենք կամենում որ առանց մեր ընտրողութեանը մի որ և է տէր-Կիրակոս կամ տէր-Մարկոս մեզ հովէր, քանի որ մեզ համար ունենք ընտրված քահանայ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Այսօր Նօրդենշէլդ հրաւիրված է բարձրագոյն ճաշի։ Երէկ Կրօնշտատի թատրոնում հրդեհի ժամանակ 8 մարդ մեռան։

ՓԱՐԻԶ, 29 դեկտեմբերի։ Քաղաքային խորհրդարանների անդամների ընտրութիւնները բարեյաջող են հանրապետականների համար։ Ներված կօմունարներից ոչ մէկը չընտրվեցաւ։

ԴՈՒՐԲԱՆ, 29 դեկտեմբերի։ Բօէրները յարձակվեցան Ույօկերստրումի վրա, բայց յետ մղվեցան։ Բօէրները թէպէտ գրաւել էին այդ նահանգը, բայց նրան նորից մաքրեցին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 դեկտեմբերի։ Այսօր գիշերվայ 2 ժամին Նօրդենշէլդ յետ ուղևորվեցաւ։ Տեխնիկական ընկերութիւնը վճռեց Նօրդենշէլդին ոսկէ մեդալ տալ։

ԼՕՆԴՕՆ, 30 դեկտեմբերի։ Պաշտօնապէս յայտնված է Դօնալդ Ստիւարտին հնդկական գործերի գլխաւոր հրամանատար նշանակելու մասին։ „Times“ լրագրին հաղորդում են Բօմբէյից դեկտեմբերի 29-ից. Կալատուրի մահմետական հնդիկների մէջ բացված է դաւադրութիւն եւրոպացիներին ջարդելու նպատակով։

ԿԵՊՏՕՈՒՆ, 29 դեկտեմբերի։ Բօէրները գրաւեցին Զիրեստ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 դեկտեմբերի։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ 1881 թուականի պետական բիւդժետը կազմված է $50^1/_3$ միլիօն դեֆիցիտով։ Այդ դեֆիցիտը ծածկելու համար երկաթուղիների մայր գումարը կը վերադարձնէ պետական գանձարանին իր պարտքի մի մասը։

ԲԵԼԳՐԱԴ, 30 դեկտեմբերի։ Այսօր բացվեցաւ ազգային նոր ժողովը։ Գահական ճառը իշխան Միլան կարդացանէ կիրակի։

Կ. ՊՕԼԻՍ, 2 յունվարի։ Զինուորական ուսումնարանների դիրեկտոր Էդհեմ-փաշա նշանակվեցաւ գլխաւոր շտաբի կառավարիչ։ Ասում են, որ պատերազմական նախկին մինիստր Հուսէյն-Գուզնի-փաշա և Ալիդկյ-փաշա կալանաւորված են։

ԴՈՒԲԼԻՆ, 2 յունվարի։ Երէկ մանգաղներով զինաւորված ամբոխը թոյլ չը տուեց դատաստանական ատեանին գնալ մի ֆերմերի տուն Լօնգֆօրի կոմսութեան մէջ, որին դատաստանական հրաւիրաթուղթ պէտք է յանձնէր։ Այդ դէպքի պատճառով այսօր զօրքեր պահանջվեցան, որոնք սուիններով ցրվեցին ամբոխին։

ԼՕՆԴՕՆ, 2 յունվարի։ Շօու և տասն և հինգ այլ պատգամաւորներ չը կամեցան առաջնորդվել Պառնելից։ Նրանք առանձին անկախ կուսակցութիւն են կազմում Իռլանդական զինուորներ անունով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունվարի։ „Праит. Вѣстн.“ լրագրի մէջ տպված է 1881 թուականի պետական բիւդժետի հաշիւ. մուտք 717,461,609 ռ., ելք 717,461,609 ռ.։ Նոյն թերթով նշանակվել է պետական տնտեսութեան բաժնի նախագահ։ Բարձրագոյն հրամանով կարգադրված է. 1) Պետական գանձարանից հիմիկուց վճարել պետական բանկին մի գումար, որ 400 միլիօնով փոքրացնի պետական գանձարանի հաշւով արած ծախսերի համար բանկից վերցրած պարտքը, 2) պարտքի մնացած գումարը փոքրացնել 400 միլիօնով սկսած 1881 թուականից իւրաքանչիւր տարի պետական գանձարանից բանկին 50 միլիօն վճարելով, 3) ոչնչացնել կրեդիտի տոմսակները, որոնք կը հաւաքվին բանկի գանձարանների մէջ, ի նկատի ունենալով դրամական շրջաբերութեան պէտքերը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվարի։ „Голосъ“ լրագրին Օդէսսայից հաղորդում են յունվարի 1-ից. 1881 թուականից Օդէսսայի բոլոր լրագիրները ազատված են վարչական ցենզուրայից, որին նրանք ենթարկված էին ռուս-թիւրքական պատերազմի սկսելուց։ „Новое Время“ լրագիրը լսել է, որ հոգեւոր դաւանութիւնների բաժնի դիրեկտոր Մոսոլով ուղևորվեցաւ Հռոմ շատ նշանաւոր յանձնարարութիւններով, որոնք երևի վերաբերվում են հռօմէական նուիրակի հետ յարաբերութիւնների վերականգնելուն։

ԼՕՆԴՕՆ, 3 յունվարի։ Տրանսվաալի բօէրները շարժվում են դէպի արևմուտք և գրաւեցին Գեդրան Վեստգրինվալենդի մէջ։

ՎԻԵՆՆԱ, 3 յունվարի։ Արդարութեան մինիստր Շտրէյտ և առևտրական մինիստր Կրեմեր արձակված են պաշտօններից։ Նրանց տեղ նշանակվեցան առևտրական մինիստր Փինօ և արդարութեան Պրաժակ։

ՄԱՆՉԵՍՏԵՐ, 3 յունվարի։ Երէկ Զալֆորդի մէջ դինամիտի ճայթիւն եղաւ սարայների մէջ, որոնք զէնքերի պահեստներին կից էին։ Սարայները քանդված են։ Կարծում են, որ ճայթիւնը ֆինիաններն են գործել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յունվարի։ Յայտնի փորագրող, ակադեմիայի անդամ Սերեակով յունվարի 2-ին վախճանվեցաւ Նիցցայի մէջ բարակացաւից։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է. 1881 թուին հրատարակվելու պետական գանձարանի տոմսակների կեղծելու առաջն առնելու համար հետևեալ փոփոխութիւններն են արված. գունաւոր ցանցը կուպօնների վրա շինված է շատ գեղին փայլով, 2) համարները պարզ են տպված և ցանցի մէջ չեն դրված, 3) փոհանը համարների վրա մոխրագոյն է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունվարի։ Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակների խաղարկութեան ժամանակ տարան հետևեալները։

№ սեր.	№ տոմ.	ռուբլ
1,796	22	200,000
16,014	21	75,000
7,575	24	40,000
5,551	1	10,000
5,346	45	
12,140	22	
3,881	26	8,000
16,064	20	
19,557	90	
18,746	27	
19,870	33	
3,283	40	
4,475	46	5,000
11,299	41	
8,962	11	
15,200	7	
25,036	30	
12,544	18	
5,971	18	1,000
6,602	45	
8,382	24	
11,389	15	
8,350	39	
18,152	29	
11,176	48	
8,043	28	
10,433	3	
14,859	18	
11,195	49	
11,495	43	
8,446	15	
8,446	7	
9,272	3	
10,199	29	
8,878	25	
4,733	5	
19,486	5	
16,564	5	
17,295	48	
17,946	9	

ԼՕՆԴՕՆ, 6 յունվարի։ Յունական կառավարութիւնը դիմեց ռուսաց կառավարութեանը, խնդրելով նրանից Թիւրքիայի մէջ ապրող Յունաստանի հպատակներին իր հովանաւորութեան տակ առնել։ „Daily News“ լրագիրը լսել է, որ Ֆրանսիական կառավարութիւնը յետ է առել իր առաջարկութիւնը յոյն-թիւրքական խնդիրը միջնորդ դատարանի օգնութեամբ վճռելու մասին։

ՓԱՐԻԶ, 5 յունվարի։ Բ. Դրան շրջաբերականի մասին հաւատացնում են, որ պետութիւնները ամենից առաջ կառաջարկեն Թիւրքիային ցոյց տալ վերջնական սահմանները այն գիծումների, որոնց նա համաձայն է անել յօգուտ Յունաստանի։

Կ. ՊՕԼԻՍ, 5-ին յունվարի։ Բ. Դուռը մի շրջաբերական հրատարակեց, որով նա առաջարկում է պետութիւններին Կ. Պօլսի մէջ մի կօնֆերենցիա հրաւիրել յոյն-թիւրքական վէճը վճռելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունվարի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 37 կ., երկրորդ 93 ռ., 12 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 222 ռ. 50 կ., երկրորդ 221 ռ., 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 92 ռ., ոսկի 7 ռ. 85 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ $25^1/_4$ պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 214 մարկ 37 պֆ., Փարիզի վրա $266^1/_4$ ֆր.։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ